ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021-2026 ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

2022 թվականի մայիսի 18-ին Արմավիրի համայնքապետարանում անցկացվեց Արմավիր համայնքի 2021-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրի հանրային քննարկում, որին մասնակցում էին ավագանու անդամներ, վարչական ղեկավարներ, համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ, ՀԼՄ ներկայացուցիչներ: Արմավիր համայնքի 2021-2026 թվականների ներկայացրեց համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանը: Նա նշեց, որ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը ներկայացնում է համայնքի զարգացման տեսլականն առաջիկա 5 տարիների համար՝ սահմանելով զարգացման հիմնական ուղղությունները և գերակա ոլորտները. այն գործառական փաստաթուղթ է, որը սահմանում է գործողություններն ու արդյունքները, ինչպես նաև ծրագրի համար հասանելի ֆինանսական միջոցները: Նա նշեց, որ հատկապես ուշադրության կենտրոնում է լինելու գյուղատնտեսության ոլորտը: Արդեն իսկ սկսվել են ուսումնասիրություններ ոռոգման ցանցի հնարավոր ընդլայման համար, առաջիկայում աշխատանքներ են նախատեսվում չշահագործվող խորքային հորերի գույքագրման և վերագործարկման ուղղությամբ՝ ինչը առաջնահերթ խնդիր է գյուղաբնակ մեր քաղաքացիների համար:

Արմավիր համայնքի առաջիկա հինգ տարիների համար զարգացման հիմնական ուղղություններ և գերակա ոլորտներ են սահմանվում քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, կրթության, մշակույթի, շրջակա միջավայրի, առողջ ապրելակերպի, սոցիալական պաշտպանության և գյուղատնտեսության ոլորտները համայնքի տեսլականն է Արմավիրը դարձնել անվտանգ, հարմարավետ, ապրելու և գործելու կենսամիջավայր, այցելուների համար գրավիչ, ձեռնարկատիրության զարգացման համար նպաստավոր, զարգացած ենթակառուցվածքներ ունեցող, բարեկարգ, մաքուր ու գրավիչ բնակավայր:

Ծավալվեց նախագծի ակտիվ քննարկում, եղան առաջարկներ՝ ծրագրի ուժեղ և թույլ կողմերի հետ կապված: Դ. Խուդաթյանը նշեց, որ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը իր արտացոլումը կգտնի յուրաքանչյուր տարվա տարեկան աշխատանքային պլանում և ավելի կոնկրետ ըստ ժամանակահատվածի կարտացոլվեն համայնքային նշանակության առավել հրատապ ու կարևորագույն խնդիրները և կտրվեն այդ խնդիրների լուծման համար կատարվող աշխատանքների մեկնարկ:Քննարկման ընթացքում կարևորվեց հատկապես այն եզրույթը որ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի յուրաքանչյուր բնակչի փաստաթուղթն է և նրա ինչպես կազմման այնպես էլ իրագործման հարցում առաջնային դերը բնակչինն է, որը որքան պատասխանատվություն է նշանակում, նույնչափ էլ պարտավորեցնող է:Ամփոփելով քննարկումը Դ. Խուդաթյանը նշեց, որ քննարկման ընթացքում եղած առաջարկություններով փոփոխված նախագիծը կներկայացվի համայնքի ավագանու առաջիկա նիստում քննարկման և հաստատման:

ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐԵՑ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆԸ